

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

ՔԱՂՈՒԱԾՔ ՅՈՐԱԳՐՈՒԹԵԱՆՑ ՍԻՆՕԴԻ

— Ի 20-ն փետրուարի Սինոդն հրաւայեաց՝ առաքելով առ Թեմական Առաջնորդս Հայոց Ռուսիոյ զտպագրեալ օրինակս Թարգմանութեան կանոնաց, տուեալոց ի նախկին Փոխարքայէն Կովկասու ի 1865 ամի վասն ընտրութեանց աշխարհական պատգամաւորաց կաթողիկոսական ընտրութեանց, պատուիրել Առաջնորդացն հրահանգել յառաջիկայ ընտրութիւնս յաղագս հարկի ընտրութեանցն այդոքիկ կանոնօք, իսկ ի խնդիրս իրաւասութեան ձայնի ի ծխական ժողովս զեկուցանել երկրորդ յօդուածով Ա. պարբ. ժամանակաւոր կանոնաց, սահմանելոց յարդի Փոխարքայէն Կովկասու ի 1905 ամի, ըստ զորութեան որոյ ի ծխական ժողովս ունին իրաւունս ձայնի ամենայն անձինք հայ—լուսաւորչականք արական սեռի, որք ոչ պակաս քան զերկուս ամս՝ համարին ծխականք այնր եկեղեցւոյ, որոյ է ժողովն, ունին զ25 ամեայ հա-

սակ և զօրինական իրաւունս կատարելոյ զհասարակական պարտականութիւնս։ Ընդ ամին ծանուցանել ծխական ժողովոց, զի բողոքք ընդդէմ անկանոն ընտրութեանց պատուիրակ—երեսփոխանաց ընդունին, յընթացս երկուց եօթնեկից յօրէ ընտրութեանցն, և լուծեալ լինին ի թեմական Առաջնորդէ, իսկ բողոքք ընդդէմ անկանոն ընտրութեանց թեմական պատգամաւորաց մատուցանեն յընթացս նոյնպիսի ժամանակամիջոցի Առաջնորդի թեմին, որ հանդերձ բացատրութեամբ իւրով յընթացս երից աւուրց հասուցանէ ի Սինոդն ի տնօրէնութիւն։ Հ. 159.

— Ի 27-ն փետրուարի Սինոդն հրամայեաց՝ թոյլ տալ Մկրտիչ քահանայի Գասպարեան տեղափոխել յԱղէքսանդրոպոլ քաղաքէ ի Ցարիցին ի մշտական հովիւ հայ ժողովրդականաց տեղւոյն։ Հ. 163.

— Ի նմին թուի Սինոդն հրամայեաց՝ ղշրջաբերական հրաման Սինոդին որ ի 11-ն յունիսի 1899 ամի, զհիմնեալն ի վերայ կոնդակի ի Տէր հանգուցեալ Հայրապետի յ30 ապրիլի տարւոյն, թ. 529, թողուլ առանց փոփոխութեան, քանզի ատեանն ոչ համարի ինքեան իրաւունս առնել տնօրէնութիւն ինչ հակառակ կոնդակի Կաթողիկոսի Ամենայն Հայոց։ Ուստի զյայտարարութիւն հոգաբարձութեան Ներսիսեան հոգևոր դպրոցի ի 20-ն մայիսի 1907 ամի, թ. 381, որ յանուն ի Տէր հանգուցեալ Հայրապետի, թողուլ առանց հետևանաց, զորմէ տալ տեղեկութիւն հոգաբարձութեանն ի ձեռն Առաջնորդի թեմին Վրաստանի։ Հ. 165.

— Ի նմին թուի Սինոդն հրամայեաց՝ Հիմնաւոր համարելով զմերժումն Տ. Տեղակալի Կաթուղիկոսի Ամենայն Հայոց որ վասն միջնորդութեան առաջի նախարարութեան յաղագս հաստատելոյ զկանոնադրութիւն թեմական դպրոցին Աստրախանի, զինդիր կառավարիչ Ցանձնաժողովոյ դպրոցին թողուլ առանց հետևանաց, զորմէ տալ նմին տեղեկութիւն ի ձեռն Կոնսիստ. Աստրախանի։ Հ. 167.

— Ի նմին թուի Սինոդն հրամայեաց՝ Ի փոփոխումն օրագրական վճռոյ Սինոդին ի 11-ն յուլիսի 1907 ամի նախ՝ մի տալ այսուհետև բացակայող միաբանից զոնընդադրամ, զի չէ այն մասն ռոճկի, այլ գին կերակրոց և հացի, զոր ընդունէին միաբանք ի սեղանատանէ վանուցս և երկրորդ՝ տալ զռոճիկ միաբանից, որք թոյլտուութեամբ Սինոդին մեկնին ի Մ. Աթոռոյ, յընթացս ժամանակի, որ սահմանեսցի վճռով նորին վասն ընդունելոյ զարձակուրդ։ Հ. 169.

— Ի նմին թուի Սինոդն հրամայեաց՝ Երջաբերական հրամանաւ յայտ առնել ամենայն Կոնսիստորիայից, զի վարչութեան Տպարանի Մ. Աթոռոյ տուեալ են իրաւունք քննելոյ զամենայն հաշիւս հոգևոր հաստատութեանց որ ընդ տպարանի և պահանջելոյ զապառիկս ի ձեռն անդամոյ ուրուք վարչութեանն կամ պաշտօնական գրութեամբ։ Պատուիրել նաև ամենայն Կոնսիստորիայից և Հոգևոր Կառավարութեանց, զի ամենայն թղթեան, բլանկս և մատեանս դիւանական յանձն արասցին միայն տպարանի Մայր Աթոռոյ ի տպագրել։ Հ. 173.

— Ի նմին թուի Սինոդն հրամայեաց՝ Հաստատելով զեղբակացութիւն Կոնսիստորիային Ղարաբաղի, դադարեցուցանել զեղիշէ քահանայն Տէր Յովսէփեան Բէկլարքենդ և Բլեղ գիւղից, վիճակին Նուխւոյ ի քահանայագործութենէ և առաքել զնա ի վանս Սևանայ միամեայ ժամանակաւ, յանձնելով զհովուութիւն ծխականաց նորա այլում՝ քահանայի այնու պայմանաւ, զի զմի երրորդ մասն արդեանցն ընկալցի նա յօգուտ իւր և զերկու երրորդ մասունս տացէ ընտանեաց Եղիշէի քահանայի Տէր Յովսէփեան։ Հ. 177.

— Ի 3-ն մարտի Սինոդն հրամայեաց՝ թոյլ տալ Կոնսիստորիային Հայոց Վրաստանի ընդունել զՄիքայէլն Տէր Գրիգորեանց ի հոգևոր կոչումն ի ձեռնադրել զնա ի քահանայ Շամշուլդա գեղջ։ Հ. 193.

— Ի 5-ն մարտի Սինոդն հրամայեաց՝ քանզի Փո-

խանորդ Գանձակի Կորիւն վարդապետ ի հնդից ամսոց հետէ եղեալ ի բանտի հեռացեալ է ի պաշտօնատեղւոյն, համարել զնա արձակեալ ի պաշտամանէն և սահմանել նմա ի նպաստ ռուբլիս երեսուն առ ամիսն, զոր պատուիրել հատուցանել Կոնսիստորիային Վռոատանի՝ մինչ վարդապետն գտանի ի բանտի, իսկ վասն կարդելոյ զոք ի պաշտօն Փոխանորդի Գանձակի առանձին յայտարարութեամբ դիմել առ Տ. Տեղեկալ Ատենապետի Սինոդին։ Հ. 197.

— Ի 7-ն մարտի Սինոդն հրամայեաց՝ զՀիմնական նորոգութիւն Մ. Տաճարի Ս. Էջմիածնի գտանելով անհրաժեշտ՝ նախ՝ տալ Սինոդիս զժապաւինեալ և զվաւերացուցեալ մատեան վասն արձանագրելոյ ի նմին զգումարս դրամոց, զորս Սինոդն ունի ընդունել հետզհետէ ի գրասենեակէ Մեծ. Աղէքսանդրի Մանթաշեանց և վասն տալոյ ի դրամոցդ հետզհետէ, ըստ չափու կարեաց, կարգեալ Ցանձնաժողովոյն ըստ գրութեանց նորին, ի պէտս նորոգութեան Տաճարի։ Եւ երկրորդ՝ առաջադրել կարգեալ Ցանձնաժողովոյն յետ աւարտման գործոյն մատուցանել նաև Սինոդին զմանրամասն հաշիւ ընկալեալ դրամոցն և կատարեալ գործոյն։ Հ. 209.

— Ի 8-ն մարտի Սինոդն հրամայեաց՝ նախ՝ խնդրել ի պ. Պրոկուրորէ Սինոդին կազմել մասնաժողով վասն ի յայտ ածելոյ՝ թէ որչափ արմատք անդորրագրոց ծխահարկաց և այգեհարկաց մատուցեալ են ի Սինոդն և դիւան նորին յընթացս ժամանակի հարկաժողովութեան հանգուցեալ Ցակոբայ Տէր Անտոնեանց, որչափ ի նոցունց գոն այժմ ի դիւանի և որչափ անյայտացեալ են, երբ և ի ձեռն որոյ։ Երկրորդ՝ ի նամակէ Ատենադպրի Կոնսիստորեային Նոր—Նախիջևանի և Բեսարաբիոյ Մկրտչի Տէր Անտոնեանց նկատելով՝ զի աշխատ լինի նա տալ թագուցանել զարմատս անդորրագրոց ծխահարկաց և այգեհարկաց յընթացս ժամանակի հարկաժողովութեան հանգուցեալ հօր նորա, ուստի առաքմամբ պատճէնի նամակի

նորին որ ի 15 փետրուարի անցելոյ յանուն Ծառայողի Սինոդին Արմենակայ Հայկազունւոյ, յանձն առնել նախագահի Կոնսիստորական պահանջել ի Տէր Անտոնեանցէ զբացատրութիւն և առաքել զայն ի Սինոդն. իսկ մինչ այդ, ունելով ի նկատի, զի յիշեալ Տէր Անտոնեանցն մնալով ի պաշտաման Ատենադպրի Կոնսիստորական կարէ ցուցանել զայդպիսի անհաւատարմութիւնս և ընդ փաստաթուղթս թեմական Ատենին, ուստի հեռագրաւ յանուն Կոնսիստորական արձակել զնա ի պաշտամանէ Ատենադպրի։ Հ. 197.

— Ի 10-ն մարտի Սինոդն հրամայեաց՝ զառաջադրութիւն Տ. Նախարարի որ վասն կարգելոյ զոր ի ժամանակաւոր կառավարիչ թեմին Աստրախանի մատուցանել Տ. Տեղակալի Ատենապետի Սինոդին ի պատշաճ տնօրէնութիւն։ Հ. 214.

Ամուսնալուծութիւնք.

— Ի նմին թուի Սինոդն հրամայեաց՝ առեալ ի նկատ զցուցմունս վկայից զմտաւոր վիճակէ Մանեայ Քեալաշեանց և զնոտարական ստորագրութիւն առն նորա Սահակայ, լուծանել զպսակ Քեալաշեանց ամուսնոց, թոյլ տալով առն մտանել ի նոր ամուսնութիւն ընդ այլում։ Հ. 126.

— Ի նմին թուի Սինոդն հրամայեաց՝ հաստատելով զեզրակացութիւն Կոնսիստորական Ն. Նախիջևանի և Բեսարաբիոյ, լուծանել զպսակ ընակչի Գրիգորիպոլ քաղաքի Բաղդասարայ Լէոնիկ ընդ կնոջն Վարդուհւոյ, թոյլ տալով կնոջն և եթ մտանել ի նոր ամուսնութիւն ընդ այլում։ Հ. 127.

— Ի 13-ն փետր. Սինոդն հրամայեաց՝ հաստատելով զեզրակացութիւն Կոնսիստորական Հայոց Վրաստանի, լուծանել զպսակ ընակչի Բոլնիս-Խաչէն գեղջ Սիմէոնի Տէր Անդրէասեանց ընդ կնոջն Մարեմայ Սարգսեան, թոյլ տալով առն և եթ մտանել ի նոր ամուսնութիւն ընդ այլում։ Հ. 133։

— Ի նմին թուի Սինոդն հրամայեաց՝ հաստատելով զեզրակացութիւն Կոնսիստորական Երևանայ, լուծանել զպսակ ընակչի Բաշքեանդ գեղջ գաւառին Նոր—Բայազետու Աղաբէկի

Մխիթարեան ընդ Իսկուհւոյ Համբարձումեան, թոյլ տալով առն և եթ մտանել ի նոր ամուսնութիւն ընդ այլում։ Հ. 134.

— Ի 15-ն փետր. Սինոդն հրամայեաց՝ լուծանել զպսակ բնակչի Հին—Խրիմ քաղաքի Բաղդասարայ Քէշէճեան ընդ կնոջն Եղիսաբեթի ի պատճառս անյայտ բացակայութեան վերջնոյն, տալով առն իրաւունս նորոյ ամուսնութեան։ Հ. 142.

— Ի նմին թուի Սինոդն հրամայեաց՝ հաստատել զեղրակացութիւն Կոնսիստորիային Երևանայ, որ վասն լուծանելոյ զպսակ բնակչուհւոյ Նոր—Բայազէտ քաղաքի Շուշանիկան Առաքելեանց ընդ Աւետսի Առաքելեանց ի պատճառս անյայտ բացակայութեան առն և տալոյ կնոջն իրաւունս մտանելոյ ի նոր ամուսնութիւն։ Հ. 143։

— Ի նմին թուի Սինոդն հրամայեաց՝ հաստատել զեղրակացութիւն Կոնսիստորիային Հայոց Վրաստանի, որ վասն լուծանելոյ զպսակ Տիխիսաբնակ Գաբրիէլի Բէժանեանց ընդ Սոնայի Վարդանեանց և տալոյ միայն առն իրաւունս նորոյ ամուսնութեան։ Հ. 144.

— Ի նմին թուի Սինոդն հրամայեաց՝ լուծանել զպսակ Թելաւաբնակ Սոփիայի Աւետիքեանց, թոյլ տալով երկոցունց ևս մտանել ի նոր ամուսնութիւն յետ արկանելոյ զնոսա ընդ միամեայ եկեղեցական ապաշխարանօք վասն ապօրինի կենակցութեանն նախքան զլուծումն պսակին։ Հ. 148.

— Ի 27-ն փետրուարի Սինոդն հրամայեաց՝ հաստատելով զեղրակացութիւն Կոնսիստորիային Ղարաբաղի, լուծանել զպսակ Մինայի Բաղդասարեանց ընդ առն Սարգսի, թոյլ տալով կնոջն մտանել յօրինաւոր ամուսնութիւն ընդ Աւետսի Միրզայեան զկնի քառասնօրեայ եկեղեցական ապաշխարանաց։ Հ. 178.

— Ի նմին թուի Սինոդն հրամայեաց՝ զպսակ Բուդաղի Բռնոթծախեան ընդ Բաղիի Ղօշշունց բնակչաց Սաբաթլու գեղջ գաւառին Նուխւոյ-համարել վաւերական ըստ կոնդակի ի Տէր հանգուցեալ Կաթուղիկոսի ամենայն Հայոց, իսկ զպսակադիր քահանայս զՅովհաննէս և զԹադէոսն Տէր Աւագեանց ճանաչել ապատ ի պատասխանատուութենէ ըստ զօրութեան Բարձրագոյն հրովարտակի, որ ի 11-ն Օգոստոսի 1904 ամի։ Հ. 179.

— Ի նմին թուի Սինոդն հրամայեաց՝ հաստատելով զեղրակացութիւն Կոնսիստորիային Ղարաբաղի լուծանել զպսակ բնակչուհւոյ Հերհեր գեղջ գաւառին Շուշւոյ Մինայի Սադի-

եանց ընդ առն Յակովբայ, կնոջն և եթ թոյլ տալով մտանել ի նոր ամուսնութիւն ընդ այլում։ Հ. 181.

— Ի նմին թուի Սինոդն հրամայեաց՝ հաստատելով զեղբակացութիւն Կոնսիստորիային Ղարաբաղի, լուծանել զպսակ ընակչուհւոյ Կաղարծի գեղջ գաւառին Շուշւոյ, Ռեհանի Մարգարեանց ընդ առն Գրիգորի Մարգարեանց, թոյլ տալով կնոջն մտանել ի նոր ամուսնութիւն ընդ այլում։ Հ. 182.

— Ի նմին թուի Սինոդն հրամայեաց՝ հաստատելով զեղբակացութիւն Կոնսիստորիային Հայոց Վրաստանի, լուծանել զպսակ ընակչի Մեծ-Դեսնդուբա գեղջ գաւառին Ախալքալակայ, Մնացականի Անտոնեանց ընդ կնոջն Փառանձեմայ Յովհաննիսեան, թոյլ տալով առն և եթ մտանել ի նոր ամուսնութիւն ընդ այլում։ Հ. 183.

— Ի նմին թուի Սինոդն հրամայեաց՝ հաստատելով զեղբակացութիւն Կոնսիստորիային Հայոց Վրաստանի, լուծանել զպսակ ընակչուհւոյ Շուշի քաղաքի Սաթենկան Արտեմեանց ընդ Մարգարայ Արտեմեանց, թոյլ տալով կնոջն մտանել ի նոր ամուսնութիւն ընդ այլում։ Հ. 184։

— Ի 5-ն մարտի Սինոդն հրամայեաց՝ ի պատճառս անյայտ բացակայութեան ընակչի Քեսոյ Ահմէտ գեղջ գաւառին Նորբայազէտու, վերաբնակեալն ի Նովորոսիյսկ քաղաքի Միրզի Մելիքեանց, լուծանել զպսակ նորա ընդ Զիւանի Հայրապետեան Մելիքեանց, տալով կնոջն իրաւունս նորոյ ամուսնութեան յետ արկանելոյ զնա ընդ եռամսեայ եկեղեցական ապաշխարանաց վասն ապօրինի կենակցութեանն։ Հ. 198.

— Ի նմին թուի Սինոդն հրամայեաց՝ ոչ տեսանելով զօրինական հիմն լուծման պսակի ընակչի Գանձակ քաղաքի Աւետսի Յարութիւնեանց ընդ կնոջն Աբիհայքանթի, զմիջնորդութիւն Կոնսիստորիային Հայոց Վրաստանի, որ վասն լուծման պսակին, թողուլ առանց հետևանաց, պատուիրելով թեմական Ատենին տնօրինել յորդորել զամուսինն գալ ի հաշտութիւն և ի համարնակութիւն ի յարգանս քառասնամեայ ամուսնական կենաց նոցա։ Հ. 199.

— Ի նմին թուի Սինոդն հրամայեաց՝ ոչ գտանելով զօրինական հիմն լուծման պսակի վերաբնակչուհւոյ Կարս քաղաքի Եսթերի մահտեսի Յակովբեան ընդ Սարգսի Թարխանեանց՝ հաստատել զեղբակացութիւն Կոնսիստորիային Երևանայ, որ վասն մերժելոյ զխնդիրս կնոջն յաղագս լուծման պսակին։ Հ. 200.